

ԱՐԺԱՆԱԻՈՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ ՄԸ

ՖԻԼԱՏԵԼՖԻՈՅ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏԻՆ

Մեծ հանոյքով եւ ուրախութեամբ կարդացինք « Մասիս » շաբաթաթերթին մէջ թէ Գերբ. Ստեփան Ծ. Վ. Ստեփանեան, ժողովրդապետ Ֆիլատելֆիոյ Կաթողիկէ Հայոց, արժանացած է իր բազմամեայ արդիւնաւոր գործունէութեան համար՝ նշանակուելու Պատրիարքական փոխանորդ Ն. Վ. Գերբ. Հոգեւոր Տիրոջ եւ Թագադիր Ծայրագոյն Վարդապետ, բարձրանալով միանգամայն Սրբազան Գահանայապետէն Գերապայծառի տիտղոսին:

Գերպ. Ստեփանեան, ծնած հարբերդ 1895-ին, ուսած Հռոմի Լեւոնեան Վարժարանին մէջ, եւ բարձրացած Բաղնայաւորեան սուրբ աստիճանին 1918-ին, սկսած է նախ պաշտօնավարել Պոլիս, եւ ապա 1923-ին անցած Ֆիլատելֆիա, ուր տարիներէ ի վեր գնահատելի անձնանկրութեամբ եւ առաքելական հոգով շահած է համակրութիւնը տեղական եկեղեցական իշխանութիւններու եւ իր ժողովուրդին, սրբունելով իր շուրջը բարիք եւ սէր:

Գերպ. Ստեփան Թ. Ծ. Վ., կազմակերպչական բացառիկ կարողութեան տէր, օժտած է Ֆիլատելֆիոյ առաքելութիւնը Ս. Մարկոս եկեղեցիի կառուցումով եւ բարեգարդութեամբ, զոր յետոյ 1951-ին Ն. Վ. Ծիրանաւոր Աղանանեան Կաթողիկոս Միացեալ Նահանգներու իր այցելութեան առիթով օժտած է մեծահանգէս փառաւորութեամբ:

Միտքարեան Միաբանութիւնը իր պաշտօնաթերթին միջոցաւ կը յայտնէ ջերմագին ուրախակցութիւններ, մաղթելով արդիւնաշատ տարիներ անվերջ յաջողութիւններով:

ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱԾ ԵՆՔ

ԱՍԹԱՐՃԵԱՆ ՏՈՒԹ. Գ. — Հայոց պատմութիւն (արարեքէն): Մարտի, 1951. էջ 404 (պատկերազարդ):

ԼԱԿԵՐԼՕՖ ՍԵԼՄԱ. — Սուրբ Բոգը (Թրդ. Ս. Պաղգալեան): Մարտի, տպ. Ե. Արմէն եւ Ընկ. 1950. էջ 32:

ԼԱՆԻՍ ԼԵԻՈՆ. — Կեանքի վեպը — դրուագներով: Վենետիկ, Ս. Ղազար, 1952. էջ 184:

ԼՈՒԹԻՅԻ ՄԻՆԱՍ. — Փշրուած բաժակ: Լոս Անճելլոս, Գալիֆ. տպ. Հորիզոն, 1953. էջ 66:

ԿԱԶԵԼ ԱՆՏՈՆ. — Սիրոյ եւ վշտի մեղեդիներ (բերթումներ): Աթէնք, տպ. « Ազատ Օր », 1953. էջ 103:

ՀԱՄԱՍՏԵՂ. — Սպիտակ ձիւնորը. Հա. Ա. Բ.: Լոս Անճելլոս, տպ. Հորիզոն, 1952. էջ 595+653:

ՀԱՄԱՐԵԱՆ ՀՐԱՆԻ. — Տարաբախտ Ուսանողը (վիպակ հայ չքաւոր ուսանողի մը կեանքէն տունում). Բ. տպագրութիւն: Աթէնք, տպ. Կիզիկոս. Հայ. Կիրիկիայ, 1953. էջ 92:

ՆԱԹԱԼԻ ՇԱՀԱՆ. — Նշմար Շահան Նաբալիի գերական — հասարակական յիսնամեայ կեանքին: Պոթրն, տպ. « Պայքար », 1953. էջ 104:

ՇՄԻՏ ԲԵՐԻՍԹՕՖ. — Ժընէվիէյ (բարոյակէտ, թարգմանուած Գաղղիերէնէ): Պէյրուք, տպ. Կ. Տօնիկեան, 1953. էջ 112:

ԶՕՐՊԱՃԵԱՆ ՎԵՐ. Տ. Յ. — Դարուս դարմանը — Հարկաւորակ Աստուածաշունչի աշխարհարար թարգմանութեան (1853-1953): Պէյրուք, տպ. Քարաշեան, 1953. էջ 160:

ՊԱԳԳԱԼԵԱՆ ՍԱՄՈՒԷԼ. — Դաւիթ եւ Գողթաթ (թատերգութիւն մէկ արարով): Մարտի, տպ. Զաւէն, էջ 32:

ՏԱՐԱԳՃԵԱՆ ՎԵՐ. ԱԻԵՏԻՍ Ս. — Մեծն Տրդատ եւ Սուրբն Գրիգոր Լուսաւորիչ. հայոց դարձն ի բրիտոնէութիւն: (Թատերգութիւն Տ արարով): Մարտի, 1953. էջ 37:

ՏԵՐ ՄԻՆԱՍԵԱՆ Ա. — Վերջին ժամադրութիւն — զրական եւ երգիծական: Իսթանպուլ, 1954. էջ 174:

ՏԵՐ ՅԱԿՈԲԵԱՆ ԶԳՕՆ Ծ. ՎԵՐ. — Սէր եւ Ամուսնութիւն — Առաջնորդ ընտանեկան երջանկութեան: Վենետիկ, Ս. Ղազար, 1954. էջ 112:

ՓՕԼԱՏԵԱՆ Կ. — Զրոյց Ահարոնի, Էլիւարի, Շ. Նարդունիի, Օ. Պէրպէրեանի, Հ. Ս. Տէր Մովսէսեանի, Լիւի Անտրէ Մարսէլի ... հետ: Փարիզ, տպ. Արաքս, 1952. էջ 208:

ՕՐԱՅՈՅՑ 1954 Թուականին Գրիստոսի: Երուսաղէմ, տպ. Սրբոյ Յակոբեանց:

ՄԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ - ՎԵՆԵՏԻԿ

~ ԱՐԱԳ ԵՒ ԱՆԹԵՐԻ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ — ՄԱՏՁԵԼԻ ԳԻՆԵՐ ~

Տպարանս կը ստանձնէ ամէն տեսակ հրատարակութիւն Հայ եւ Եւրոպական լեզուներով, ինչպէս նաեւ Վաճառականական թուղթեր, Նամակի թուղթ, Պաշարան, Քարտեր, զուռառիպ եւ պարզ, Այցե-տոմսեր, Պրտակներ եւ այլն, եւ այլն: Առանց վարանելու դիմեցէ՛ք:

IMPRIMERIE ARMÉNIENNE

St. Lazare — VENISE — (Italie)

